

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/83-2022

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ՀԵՌԱԿԱՎ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱԶՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Խորհրդի անդամներ՝

Հ. Մաթևոսյան	ՀՀ փոխվարչապետ, խորհրդի նախագահ
Ա. Սարգսյան	ՀՀ փոխվարչապետի խորհրդական
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Վ. Քերոբյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Կ. Անդրեասյան	ՀՀ արդարադատության նախարար
Հ. Միմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Ք. Ղալեցյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող)
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Լ. Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող)
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Գ. Ավետիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է ա.թ. հուլիսի 20-ին հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետ, կառավարման խորհրդի նախագահ Հ. Մաթևոսյանի՝ ա.թ. հուլիսի 7-ի թիվ 03.1/03.28/21595-2022 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել են օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Տրանշ 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի վերանայված գնումների պլանի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքում Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի 4-ի Քաջարան-Ագարակ հատվածի վերանայված գնումների պլանը:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի հատվածի (կմ 90+200 - կմ 117+670) կառուցման շրջանակներում կրնված թիվ T3-CW-02 պայմանագրի N10 փոփոխման հրահանգի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքում Խորհուրդը որոշեց՝

- 1) Հաստատել Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի Տրանշ 3՝ Լանջիկ-Գյումրի հատվածի (կմ 90+200 - կմ 117+670) շրջանակներում 08.12.2015թ. Սինոհիդրո Քորփորեյշն ՍՊԸ հետ կնքված շինարարական աշխատանքների թիվ T3-CW-02 պայմանագրի N10 փոփոխման հրահանգը:
- 2) «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Ավետիսյանին՝ գործող կարգին համապատասխան Սինոհիդրո Քորփորեյշն ՍՊԸ-ի հետ սեղմ ժամկետում ստորագրել 08.12.2015թ. կնքված թիվ T3-CW-02 պայմանագրի N10 փոփոխման հրահանգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ